IX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

IX դ. երկրորդ կեսին Արաբական խալիֆայության քաղաքական համակարգը հոգևարք էր ապրում, տեղը զիջելով ավելի կենսունակ ու բնական կազմավորումների՝ ազգային պետությունների: Հայաստանը ևս ջանում էր թոթափել ըռնի ուժով իրեն պարտադրված ավելի քան երկդարյա օտար գերիշխանությունը: Սակայն խալիֆայությունը նպատակասլաց ճիգեր էր գործադրում Հայասաանը ներքին ինքնուրույնությունից, պետական կենսունակությունից զրկելու համար: Արաբական Բուղա զորապետը 851 թ. պետք է իրագործեր այդ ծրագիրը՝ «բարձումն յաշխարհէս մեծամեծացն Հայոց»[1],– գրում է Արծրունյաց պատմագիրը: Վերջինս թեև հաղորդում է, որ գժնաբարք այդ զորապետը խնայեց Սմբատ սպարապետի որդիներ Աշոտին, Մուշեղին ու Սմբատին, թողնելով «տիրել աշխարհին իւրեանց յաղագս յառաջագոյն մտերմութեան հօրն նոցա առ թագաւորն և առ զօրավարն»[2], սակայն նրա հետագա շարադրանքից հավաստվում է, որ Բուղան չի վստահել Սմբատ սպարապետին և նրա որդիներին: Սմբատը մահվամբ հատուցեց այդ «մտերմության» համար, իսկ Պարտավում որջացած Բուղան ոմն Աբրահիմի նշանակեց «հազարապետ Հայոց, և վերակացու ի վերայ հարկաց արքունի, և տիրել փոխանակ իշխանաց նորա»[3]: Բայց խալիֆայի արբանյակներն այլևս չէին կարող միանձնյա գերակայել Հայաստանում: Ուստի 855 թ. Աշոտ Բագրատունին ճանաչվեց հայոց սպարապետ: Անվանական էր դառնում նաև Արմինիայի ոստիկանի իրավազորությունը: 862 թ. ոստիկան կարգվեց Ալի իբն Յահյա ալ-Արմանին[4], որը խալիֆայի հրամանով նույն տարում Աշոտ Բատրատունուն կարգեց «իշխան իշխանացս Հայոց... բազում զգեստիւք և արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի»[5]:

Արաբական խալիֆայության համակարգում քրիստոնեական եկեղեցին պետություն էր պետության մեջ[6]: Հարկավ, Հայ առաքելական եկեղեցին մարմնավորում էր Հայաստանի պետականությունն իբրև հոգևոր և օրենսդիր հաստատություն: Այն պահպանում էր նաև իր ապահարկ կացությու-

---

[1] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմութիւն տանն Արծրունեաց. Երևան, 1985, էջ 296:*

[2] *Նույն տեղում, էջ 298:*

[3] *Նույն տեղում:*

[4] Я к у б и. История. Пер. П. Жузе, Баку, 1927, с. 21.

[5] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Հ ո վ հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի). Թիֆլիս, 1912, էջ 133:*

[6] А. М е ц. Мусульманский ренессанс. М., 1973, с. 39.

նը, գավանական ինքնուրույնությունը, երկրի պետաիրավական օրինակարգը, սահմանում կանոնական իրավանորմեր, որոշումներ: Եկեղեցու առաջնորդը շարունակում էր նստել Դվինում՝ ոստիկանի նստավայրում, միջնադարյան Հայաստանի հռչակավոր մայրաքաղաքում, խորհրդանշելով երկրում իր ունեցած հոգևոր-քաղաքական իրավազորությունը: Բագրատունիները հաշվի առան այդ զորեղ փաստը և ամեն կերպ ջանացին եկեղեցին գարձնել իրենց իշխանությունն օրինականացնելու և ամրապնդելու հուսալի երաշխիքը: Երկրի միասնությունն ապահովելու համար պետք է միաբանվեին Հայաստանի եկեղեցին և քաղաքական իշխանությունը: Դեռևս Սմբատ Բագրատունի սպարապետը հետամուտ եղավ դրան, 855 թ. Երազգավորս գյուղաքաղաքում գումարել տալով եկեղեցաժողով, ուր կաթողիկոս ձեռնադրվեց Զաքարիա Զագեցին[7]: Վերջինս չուներ հոգևոր կարգ, սակայն Սմբատի կամքով միանգամից «ընկալաւ զսարկաւագութիւն, զքահանայութիւն, զեպիսկոպոսութիւն և զկաթողիկոսութիւն»[8]: Զաքարիա կաթողիկոսը քանի որ առաջադրվեց Սմբատ Բագրատունու կամքով, ուստի պետք է նպաստեր Բագրատունիների իշխանության ամրապնդմանը, դառնար նրանց հենարանը:

Եկեղեցու և Հայաստանի աշխարհիկ իշխանության համագաշն գործելակերպը առավել ցայտունությամբ դրսևորվեց Սմբատ Բագրատունու որդու՝ Աշոտի օրոք, էականորեն նպաստելով նրա հեղինակության բարձրացմանը: Զաքարիա կաթողիկոսի սատարմամբ 858 թ. աքսորից վերադարձած կեղծուրաց հայ նախարարները վերստին գավանեցին քրիստոնեական հավատը՝ «ոչ ի ծածուկ երկիւղիւ ինչ՝ այլ իբրև ի վերայ բարձր տանեաց քարոզէին զՔրիստոսի աստուածապաշտութիւն»[9]: Իսլամն ինչպես հայտնի է, մահավճիռ էր նախատեսում հավատուրացների նկատմամբ: Սակայն այդ կրոնն առերես ընդունած հայ նախարարների նկատմամբ դա բացառվեց, շնորհիվ, անշուշտ, Հայաստանի զորավոր դիրքի, Աշոտ Բագրատունու և Հայ եկեղեցու ազդեցության: Քանի որ եկեղեցին կեղծուրաց նախարարներին վերադարձրեց քրիստոնեության դիրքը, ուստի հարկ է, որ մեծանար նրա հոգևոր ազդեցությունը իշխանների վրա:

Եկեղեցու ազդեցիկ դիրքը որոշապես նպաստում էր Աշոտ Բագրատունու ազդեցության ընդլայնմանը: Աշոտ իշխանաց իշխանի գերազդեցիկ գործառնությունը հաշվի էր առնում նաև արաբական խալիֆան: Վերջինս նույնիսկ Աշոտի առաջարկությամբ 878 թ. Արմինիայի ոստիկան նշանակեց հայ նախարարներին վաղածանոթ Մուհամմադ իբն Խալիդին[10] (պատմիչի մոտ՝ «Ահմաթ որդի Հալթի»)[11]: Հայաստանի իշխանաց իշխանը, ինչպես հայտնի է, ենթարկվում էր ոստիկանին և հաստատվում խալիֆայի կողմից: Արմինիայի ոստիկանի շրջապատում զգալի էր Հայոց եկեղեցու առաջնորդի ազդեցությունը: Վարդան Արևելցին վկայում է, որ Հայոց

---

[7] Հով հ. Դրասխանակերտցի, էջ 127:

[8] Մխիթար Այրիվանեցի. Պատմութիւն Հայոց. Մոսկուա, 1860, էջ 55:

[9] Հով հ. Դրասխանակերտցի, էջ 134:

[10] А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 236.

[11] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 340:

կաթողիկոս Զաքարիա Զագեցին Արմինիայի Հիսե ոստիկանի մոտ այցելելիս «յոյժ մեծարի ի նմանէ, տուեալ նմա շատ ինչ պարգևս, և դրօշս՝ բառնալ խաչ ի վերայ նորա, և մտանել առաջի նորա միշտ»[12]:

Հասկանալի է, երկրում Աշոտ Բագրատունու աճող ազդեցությունը (անշուշտ, նաև Հայոց եկեղեցու կողմից նրան սատարելը) ի դերև էր հանում Հայաստանում Արմինիայի ոստիկանի իրավունքները, քանի որ վերջինս հետզհետե զրկվում էր այնտեղ ունեցած հենարանից, տեղը զիջելով Աշոտ Բագրատունուն: Ոստիկանի տրամադրության տակ եղած զորուժն անհամեմատորեն թույլ էր, քան Աշոտ Բագրատունուն ենթակա հայոց, վրաց և ազվանից իշխաններինը, որոնք միարանվեցին Աշոտի գերակայության տակ, այն գերադասելով իսլամի տիրապետությունից: Դվինից ոստիկանի նստավայրը Պարտավ տեղափոխելը նաև Հայաստանում նրա հենարան չունենալու արգասիք էր: Այդուհանդերձ, Արմինիայի վերջին ոստիկանը փորձեց դավադիր միջոցներով ոչնչացնել հայոց իշխաններին՝ Պարտավի Ցամանիկ ամիրայի զորակցությամբ, սակայն Աշոտ Բագրատունին իր դիտախույզների միջոցով վերահասու եղավ ոստիկանի նյութած գավին և 878 թ. նրան վտարեց Հայաստանից: Աշոտը զգուշավոր նկատառումներով շարունակեց ճանաչել ոստիկանի հաջորդների իշխանությունը՝ ընդհուպ մինչև իր թագավոր օծվելը: Թագավոր դառնալուց հետո ևս նա չխզեց կապերը խալիֆայությունից: Այն փաստը, որ նա հայ իշխանների ու հոգևոր դասի կամակցությամբ թագ ստանալու համար դիմեց խալիֆային, վկայում է, որ նա չէր կամենում լիովին անջրպետվել խալիֆայությունից: Նա անգամ Դվինը չդարձրեց իր թագավորության մայրաքաղաք, որպեսզի չհարուցի խալիֆայի դժգոհությունը: Թեև Հայ եկեղեցու գլուխը նստում էր Դվինում, սակայն խալիֆայությանը նա երկյուղ չէր ներշնչում, քանի որ կաթողիկոսն իր տրամադրության տակ չուներ զորք, հայ իշխանների վրա նրա ազդեցությունը դուրս չէր գալիս հոգևոր-բարոյական շրջանակներից: Այդ ազդեցությունը գործուն բնույթ ուներ հատկապես Աշոտ Բագրատունու շնորհիվ: Թովմա Արծրունին վկայում է, որ երբ Դերենիկ Արծրունի իշխանը կալանեց Գուրգեն Ապուպելճին, Զաքարիա կաթողիկոսը Աշոտ Բագրատունու հետ ժամանեց Վասպուրական և Դերենիկին հորդորեց ազատ արձակել Գուրգենին: Արծրունյաց մեծ իշխանն անսաց կաթողիկոսին, քանի որ վերջինիս հետ էր նաև իշխանաց իշխանը[13]: Սակայն երբ կաթողիկոսը միայնակ էր փորձում հարթել միջիշխանական վեճերը, չէր հասնում ցանկալի արդյունքների: Այսպես, երբ նույն Դերենիկ Արծրունին բանտարկեց Տարոնի իշխան Աշոտ Կյուրապաղատին, Գևորգ կաթողիկոսը փորձեց միջամտել և ազատել տալ նրան: Նա «բազում անգամ թղթովք աղաչեալ զնա, ոչ առնոյր յանձն»,– գրում է Արծրունյաց պատմիչը: Դերենիկի մոտ անձամբ ժամանած կաթողիկոսի հորդորները ոչ մի ներգործություն չունեցան[14]: Երբ Դերենիկը կալանվեց Հասան Արծրունու կողմից, կաթողիկոսը «իմաստուն և հանճարեղ խորհր-

---

[12] Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի (այսուհետև՝ Վ ա ր դ ա ն). Վենետիկ, 1862, խե. էջ 85:

[13] Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 320–322:

[14] Նույն տեղում, էջ 346:

դովք, քաղցր և կակուղ բանիւք» ջանաց Հասանին համոզել՝ աղատ արձակելու Դերենիկին, սակայն այս անգամ ևս հաջողության չհասավ: Վերջինս բանտից աղատվեց միայն այն ժամանակ, երբ գործին միջամտեց նաև Աշոտ Բագրատունին[15]:

Թեև Աշոտ Բագրատունուն էին ենթարկվում նաև վրաց և աղվանից իշխանները, սակայն հայոց իշխանաց իշխանը քաղաքական նկատառումներով երբեք առաջնություն չտվեց դավանական գործոնին, չսրեց նաև քրիստոնյաների ու իսլամ դավանողների կրոնական հարաբերությունները (մանավանդ որ նա երեք եկեղեցիների վրա գերակայություն ուներ խալիֆայի կամքով): Վրաց և աղվանից իշխանները Աշոտ Բագրատունուն դերադասում էին արաբ ոստիկանից նաև այն պատճառով, որ Աշոտը կարող էր նպաստել նրանց իշխանության ընդլայնմանը և հատկապես այդ երկրներում որոշակի աղդեցության հասած Բագրատունիների իշխանության մեծացմանը, իր քաղաքական ձեռնարկումներում հենվելով նաև նրանց աջակցության վրա:

Աշոտ Բագրատունու դերակայությունը Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում ընդունում էին նաև Բյուզանդիայում: Ըստ Կոստանդին Ծիրանածնի, Աշոտ Բագրատունին իշխում էր Արևելքի (նկատի ունի քրիստոնյա Արևելքը) բոլոր երկրներում[16]: Հայաստանի դավանափոխությունը կարող էր ապահովել Բյուզանդական եկեղեցու գերիշխանությունն այդ երկրներում: Այդ նպատակադրումով Փոտ պատրիարքը դիմեց Հայոց եկեղեցու առաջնորդ Զաքարիա Զագեցուն: Նրա այդ քայլը պայմանավորված էր նաև այն իրողությամբ, որ տվյալ պահին (Փոտի գահակալումից (858 թ.) հետո) հույժ սրվել էին Հռոմի եկեղեցու հետ Կոստանդնուպոլսի պատրիարքության հարաբերությունները, սպառնալով հանգեցնել բացարձակ խզման[17]: Փոտը հույս ուներ, որ ի դեմս Արևելքի քրիստոնյա երկրների, կարող է դաշնակիցներ ձեռք բերել ընդդեմ Հռոմի պապի: Սակայն Զաքարիա Զագեցին ընավ չընդառաջեց նրան: Փոտի կողմից հայոց կաթողիկոսին հղած նամակից երևում է, որ վերջինս պատրիարքին ուղարկած թղթով դատափետել է քաղկեդոնականությունը, այն դիտելով որպես առաջին երեք տիեզերաժողովների սահմանած դավանական սկզբունքներին հակասող ուղղություն[18]: Երկարաբան այդ նամակում Փոտը հայոց հովվապետին գիմում է իբրև Թադեոս առաքյալի և Գրիգոր Լուսավորչի աթոռի ժառանգորդի, նրան անվանելով «վերատեսուչ հիւսիսական ազինդ և հովուապետ Ասքանազեան զօրացդ»: Նա ջանում է նաև հիմնավորել Քաղկեդոնի չորրորդ տիեզերաժողովի ընդունած հավատո բանաձևի («Լևոնի տոմարի») ուղղադավանությունը, միաբնակությունը դիտելով իբրև հերձվածող հոսանք[19]: Պատրիարքը փորձում է կաթողիկոսին համոզել, որ հայերը մինչև Դվինի 554 թ. ժողովն ընդունել են Քաղկեդոնի ժո-

---

[15] Նույն տեղում, էջ 348:

[16] Կոստանդին Ծիրանածին, թարգմ. առաջաբան և ծանոթագրությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 10:

[17] История Византии, т. II, М., 1967 с. 195–196.

[18] Թուղթ Փաւտայ պատրիարքի առ Զաքարիա կաթուղիկոս Հայոց Մեծայ (Православный Палестинский Сборник, XI, вып. I, СПб., 1892, с. 180):

[19] Նույն տեղում, էջ 189:

ղովի սահմանած հավատքը: Ավելին, նա պնդում է, որ թեև այդ ժողովում մերժվել է քաղկեդոնականությունը, սակայն հայերը 571 թ. հետո վերստին ընդունել են այն և միայն 726 թ. Հովհան Օձնեցու օրոք, Մանազկերտի եկեղեցաժողովում սահմանազատվել են երկաբնակությունից[20]:

Վարդան Արևելցին Փոտի կողմից Զաքարիա կաթողիկոսին ուղարկած այս նամակը դնում է հայոց 318 (869) թվականին[21], ինչը սակայն հակասում է նամակի հիշատակարանում վկայված տարեթվին: «ՅԺԱ թուականութեան հայոց առաքեաց Փուտ Կոստանդնուպոլսի հայրապետն առ Զաքարիա հայոց մեծաց կաթողիկոս»,- կարդում ենք այդ հիշատակարանում[22]: Ըստ այդմ, Փոտը Զաքարիա կաթողիկոսին նամակ է հղել հայոց 311 թվականին, իմա՝ 862 թ.[23]:

Փոտը նամակ ուղարկեց նաև Աշոտ իշխանաց իշխանին, հավանաբար, Զաքարիա կաթողիկոսի մահվանից և Կ. Պոլսի պատրիարքական աթոռին երկրորդ անգամ իր բազմելուց (877 թ.) հետո, հույս ունենալով, որ Բագրատունի տիրակալը ելնելով քաղաքական իրավիճակից (Բյուզանդիան արդեն նեղն էր լծում հոգևարք ապրող խալիֆայությանը), հարկ է որ ընդառաջեր կայսրության եկեղեցու առաջնորդին: Փոտը թերևս հույս ուներ, որ հայոց նորընծա կաթողիկոսն Աշոտ իշխանաց իշխանի ազդեցությամբ չի ցուցաբերի իր նախորդի համառությունը: Փոտն Աշոտին դիմում է սիրաշոյող խոսքերով, նրան անվանելով «քաջայայտ բարետոհմութեամբ հզաւրադոյնդ ճոխութեամբ, բարձրագոյնդ ի համասեռս»: Պատրիարքը ջանում է նույնացնել Եփեսոսի երրորդ (431 թ.) և Քաղկեդոնի 451 թ. չորրորդ տիեզերաժողովների հաստատած հավատո սկզբունքները, գրելով. «Զորրորդ ժողովս երրորդիս միաբանեաց, զիա՞ր յանձին ունիք հայհոյել և չարահամբաւել»[24]: Նա հույս էր ակնկալում, որ Քաղկեդոնի ժողովն «ի թիւ երից ժողովոյն ի ձենջ խոստովանեալ փառաւորեսցի... Ո՛վ ոք իշխեսցէ ընդդէմ կալ հաւատոյն, որ սփռեալն և տարածեալն է ընդ ոլորտս երկրի»[25]:

Բյուզանդական եկեղեցին, ինչպես հայտնի է, կայսերականացված էր. կայսրը միաժամանակ եկեղեցու առաջնորդն էր, ուստի Փոտն իր խոսքն առավել ազդու դարձնելու համար Աշոտին դիմում է կայսեր անունից (անշուշտ, նրա կամքով), գրելով. «...Աղաչեմք զքոյդ մեծութիւն հաստատել ի ձեռն սրբոց ժողովոցն յամբիծ հաւատն, և ոչ խոտորել ի թագաւորական շաւղացն, այլ ընդ նոցայն գնալ ուղիզ ճանապարհ»: Քաջ գիտենալով, որ հայերն ի սկզբանե մերժել են Նեստորի ուսմունքը և այն նույ-

---

[20] Նույն տեղում, էջ 181–183:

[21] Վ ա ր դ ա ն, ԽԴ, էջ 82:

[22] Православный Палестинский Сборник, XI (I), с. 196.

[23] Մ. Օրմանյանը Զաքարիա կաթողիկոսի հետ Փոտի նամակագրությունը դնում է 864–867 թթ. միջև ընկած ժամանակներում (տե՛ս Մ. Օ ր մ ա ն ե ա ն. Ազգապատում. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1136), ինչը տարբեր է վերը նշված հիշատակարանում եղած թվականից (այս մասին տե՛ս նաև Պ. Ա ն ա ն ե ա ն. Փոտ պատրիարքի թղթակցությունը Հայոց հետ.– «Բազմավէպ», 1988, N1–4, էջ 18):

[24] Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 279:

[25] Նույն տեղում, էջ 280:

նացրել երկաբնակության հետ, Փոտը դատապարտում է այդ ուսմունքը, այն դիտելով որպես քաղկեդոնականությանը հակոտնյա հոսանք[26]:

Սակայն Աշոտ Բագրատունին բնավ չհրապուրվեց պատրիարքի առաջարկությամբ, կռահելով նրա հետին նպատակները, այն է՝ Հայոց եկեղեցին կախման մեջ դնել Բյուզանդական եկեղեցուց, և այդպիսով դավանափոխել հայ ժողովրդին: Աշոտը հասկանում էր, որ Հայաստանում տակավին դրության տերն է խալիֆայությունը: Բյուզանդիայի հետ իր մերձեցումը կարող էր սրել հայ-արաբական հարաբերությունները և խոչընդոտել Հայոց թագավորության վերականգնմանը նպատակաուղղված գործընթացներին: Աշոտ Բագրատունին նույնիսկ հովանավորեց Տայք նահանգի եպիսկոպոս Սահակին, որին հալածում էին բյուզանդական իշխանությունները (Տայքն այդ ժամանակ կայսրության կազմում էր): Սահակը, ինչպես հավաստում է Վարդան Արևելցին, «հալածեալ անտի վասն հաւատոց, եկն ի Հայս առ Աշոտ»[27]:

Աշոտ Իշխանայ իշխանը Շիրակավանում գումարել տվեց ժողով, որպեսզի հիմնարար պատասխան տրվի Փոտի կողմից արված առաջարկին: Ենթադրվում է, որ ժողովը հրավիրվել է Զաքարիա կաթողիկոսի օրոք[28]: Հավանաբար, այն տեղի է ունեցել Գևորգ Գառնեցու գահակալման սկզբում՝ 878 թ. (ժողովի գումարումը դրվում է նաև 879 թ. հետո)[29]: Մեկ այլ ենթադրության համաձայն, Շիրակավանի ժողովը կայացել է 862 թ. և իբր թե ընդունել է Քաղկեդոնի ժողովի սահմանած վարդապետությունը[30]: Սակայն այդ կարծիքը ժխտվում է սկզբնաղբյուրների տվյալներով:

Ուշագրավ է, որ Սահակ վարդապետը դրեց Փոտի թղթի պատասխանը «հրամանաւ Աշոտոյ հայոց իշխանաց իշխանի»[31]: Այդ թուղթն ըստ Ասողիկի, լի էր «իմաստութեամբ և գիտութեամբ»[32]: Այնտեղ հիմնավորապես ժխտվեցին քաղկեդոնականության և նրանով զորացած նեստորականության հավատո սկզբունքները և վճռապես ազդարարվեց Հայոց եկեղեցու հավատարմությունն առաջին երեք տիեզերաժողովների հաստատած հավատքին: Թղթում ընդգծվեց, որ Քաղկեդոնի ժողովի ընդունած հավատո բանաձևը («Լևոնի տոմարը») «ոչ երբէք ընկալան հարքն մեր և վարդապետքն, ծանուցեալք զնոցա աւտարաձայնութիւնս»[33]: Հիմնավոր փաստարկումներով պաշտպանվեց միաբնակությունն ըստ Կյուրեղ Ալեքսանդրացու սահմանած սկզբունքների և Եփեսոսի ժողովի հաստատած հավատո

---

[26] Նույն տեղում, էջ 281:

[27] Վ ա ր դ ա ն. ԽԴ, էջ 85:

[28] Մ. Օ ր մ ա ն ե ա ն. Նշվ. աշխ., Ա, էջ 1139:

[29] Հմմտ. Պ. Ա ն ա ն ե ա ն. Փոտ պատրիարքի թղթակցությունը..., էջ 17:

[30] Վ. Հ ա գ ո ւ ն ի. Կարևոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութենէն. Վենետիկ, 1927, էջ 478–479:

[31] Գիրք թղթոց, էջ 283: Վարդան Արևելցին ժողովականների մեջ հիշում է նաև Նանա Ասորուն (Վ ա ր դ ա ն. ԽԴ, էջ 82), որը սակայն, ժամանակակից է ոչ թե Աշոտ իշխանաց իշխանին, այլ Աշոտ Մսակեր Բագրատունուն (տես M i c h e l L e S y r i e n. Chronique. T. III, ed. et tracd. par J. Chabot, Paris, 1905, p. 495–496). Այս մասին տես նաև Ն. Ա կ ի ն ե ա ն. Թեոդորոս Ապիկուռա և Նանա Ասորի Հայաստանի մեջ.– Մատենագրական հետազոտութիւններ. հ. Ա, Վիեննա, 1922, էջ 121:

[32] Տես Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ստ. Տարոնեցի). Ս. Պետերբուրգ, 1885, III, Բ, էջ 158:

[33] Գիրք թղթոց, էջ 284-292:

բանաձևի: Կտրուկորեն մերժվեց Եվտիքեսի ծայրահեղ միաբնակությունը, որը ժխտում էր Քրիստոսի մարդկային բնությունը (Փոտն իր թղթում Հայոց եկեղեցին համարում էր Եվտիքեսի հետևորդ): Նամակում հատուկ շեշտվեց հավատարմությունը «Լուսավորչին մերոյ սրբոյն Գրիգորի ուղղակի սահմանագրութեան ամբիծ հաւատոյն... զոր չինեաց սուրբն այն ի վերայ առաքելական վիմին»:

Այս պատասխանից հետո Փոտ պատրիարքը համոզվեց, որ հայերի դավանական ինքնորոշումը հաստատ է ու անբեկանելի: Ուստի նա այլևս փորձ չարեց գավանափոխության իր ծրագրերը հրամցնել նրանց: Իհարկե, Փոտի առաջարկի մերժումից հետո հայ-բյուզանդական հարաբերությունները չմթագնեցին, չնորհիվ Աշոտ Բագրատունու քաղաքական իմաստության, շրջահայեցության: Զարծարծվեցին նաև երկու պետությունների միջև եղած դավանական տարաձայնությունները, որոնք միառժամանակ (Վասիլ I-ի օրոք) նույնիսկ մղվեցին հետին պլան:

Զաքարիային հաջորդած Գեորգ Գառնեցին 877 թ. կաթողիկոս ձեռնադրվեց Աշոտ Բագրատունու հրամանով[34]: Հասկանալի է, իշխանաց իշխանը և կաթողիկոսը միավորելու էին իրենց ջանքերը երկրի անկախությունն ամրապնդելու համար: Եկեղեցին շարունակեց օրինակարգել համերկրային իրավակեցությունը, ամրակայելով Աշոտ Բագրատունու իշխանության հոգևոր և իրավական հիմքերը: Ուստի զգալի էր կաթողիկոսի, Հայոց եկեղեցու ազդեցությունը նրա վրա: Դրա ցայտուն վկայությունն է Գևորգ Գառնեցու կողմից Աշոտին թագադրելու փաստը, որով ազդանշվում էր, որ Բագրատունյաց նորընծա թագավորի իշխանությունը ոչ թե օտար տիրակալների շնորհն է, այլ ձեռք է բերվել Հայաստանի գործուն ուժերի ջանքերով և հայոց կաթողիկոսի օրհնությամբ: Այն նաև եկեղեցու և պետության միասնական ուղեգծի դրսևորումն էր: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ հայ նախարարները «խորհուրդ միաբանական առեալ թագաւորացուցանել զնա ի վերայ ինքեանց, զեկուցանեն ամիրապետին ի ձեռն ոստիկանին Յիսէի»[35]: Այդպիսով հայ նախարարները նախ իրենք են Աշոտ Բագրատունուն ճանաչել հայոց թագավոր, նոր ապա դիմել են խալիֆային, որպեսզի թագը հաստատի[36]: Պատմագիրը վկայում է, որ Աշոտի թագադրման հանդեսի ժամանակ Գևորգ կաթողիկոսը «զհոգևոր օրհնութեանցն գովութիւնս աստուածայինս ի վերայ կատարեալ փոխանակ օծման սրուակի իւղոյն սլսակեն զնա թագաւոր ի վերայ Ասքանազեան ազին»[37]:

Ցավոք, պատմագիրը չի նշում Աշոտի թագադրման և օծման տարեթիվը: Թովմա Արծրունին ևս չի հիշում նրա թագադրման և օծման որոշակի թվական: Նա լոկ հաղորդում է, որ Աշոտը թագավորել է չորս տարի և վախճանվել «ՅԼԹ (990) թուականութեան Հայոց, և ի ԺԵ ամի հայրապե-

---

[34] Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 137: Գեորգ Գառնեցու հայրապետության սկիզբ է համարվել նաև 876 թ. (տես Th. A r t s r u n i. History of the House of the Artsrunik. Transl. and commentary by R. Thomson, Detroit, 1985, p. 293, n. 1):

[35] Նույն տեղում, էջ 138-139:

[36] J. M a r k w a r t. Sudarmenien und die Tigrisquellen. Wien, 1930, S. 327.

[37] Հ ո վ հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 139:

տության Գեորգեայ Հայոց կաթողիկոսի»[38]: Ըստ Ասողիկի, Աշոտը թագավորել է «ամս է»[39], իմա՝ 884–890 թթ.: Հավանաբար, Աշոտի թագադրումը կատարվել է 884 թ. վերջին: Այս փաստը հաստատող որոշակի կռվան կարող է ծառայել XIV դ. օրինակված մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանը, ուր ասվում է, որ Գեորգ կաթողիկոսն «օծեաց զԱշոտ թագաւոր Հայոց ի թվ. մերում ԳՃԼԳ (333/884) և քաղոց ամսոյ ժ»[40]: Քաղոցն ինչպես հայտնի է, հայոց տոմարի 5-րդ ամիսն էր, որի առաջին օրը համընկնում է դեկտեմբերի 9-ին, հետևաբար, քաղոցի 10-ը նույնանում է դեկտեմբերի 19-ի հետ: Ըստ այդմ, Աշոտի թագադրումն ընկնում է 884 թ. դեկտեմբերի 19-ին:

Ինչպես նշվեց, Թովմա Արծրունին Աշոտի մահը դնում է Գեորգ Գառնեցու աթոռակալման 15-րդ տարում: Ստույգ հայտնի է, որ Աշոտ I-ը վախճանվել է 890 թ.: Ըստ այդմ, Գևորգ Գառնեցին կաթողիկոս է դարձել դրանից 15 տարի առաջ, իմա՝ 875 թ.[41]:

Աշոտ I-ի թագօրհնեքի մասին վկայություն ունի նաև Վարդան Արևելցին, ըստ որի «օրհնէ զթագն տէր Գէորդ յերեքհարիւր երեսուն և վեց թուին, և երկոտասաներորդ ամի հայրապետության իւրում, և յութհարիւր ութսուն և ութ ամի ծննդեան Տեառն»[42]: Ստացվում է, որ կաթողիկոսը թագն օրհնել է իր գահակալման 12-րդ տարում, որն ըստ պատմչի, 888 թվականն է: Սակայն անընական կլիներ Հայոց եկեղեցու առաջնորդի կողմից Աշոտ Բագրատունու թագադրությունը հետաձգելը, քանի որ կաթողիկոսի կողմից թագադրելու փաստը կարևորվում էր նաև նրանով, որ այն սրբազնագործում էր Բագրատունի գահակալի իշխանությունը, այն դարձնելով օրինական (լեգիտիմ): Աշոտն այդ քայլով նպատակ ուներ նաև ի չիք դարձնել ոչ քրիստոնյա վեհապետից թագ ստանալու բացասական ազդեցությունը:

Ըստ Վարդան Արևելցու, Աշոտ Բագրատունուն թագ է ուղարկել Վասիլ I-ին կայսրը[43]: Ըստ երևույթին պատմագիրը կամեցել է հայոց թագավորին թագադրված տեսնել քրիստոնյա կայսեր կողմից: Սակայն ժամանակամերձ Հովհաննես Դրասխանակերտցու մոտ նման վկայություն չկա: Նա սոսկ նշում է, որ Վասիլ I-ը դաշինք է կնքել Աշոտ Բագրատունու հետ, նրան «հաղորդակից կացուցանելով յամենայն թագավորութիւնս տէրութեան իւրոյ»[44], ինչը հարկավ վկայում է նրանց միջև եղած մերձակցության մասին[45]: Դա բնական էր, քանի որ Վասիլ I-ը նպատակադրվել էր խալիֆայության դեմ միավորել քրիստոնյա պետություններին, ուստի նա դաշինք կնքեց Կիևյան Ռուսիայի, Բուլղարիայի, Վենետիկի հանրապե-

---

38 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 356:

39 Տ ա ր օ ն ե ց ի, III, Բ, էջ 159:

40 Մ ե ս ր ո պ ե պ ի ս կ ո պ ո ս. Նոր ստացված ձեռագրեր.– «Արարատ». Ս. Էջմիածին, 1910, հուլիս, էջ 623:

41 Մ. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 1146 (877 թիվն է նշվում):

42 Վ ա ր դ ա ն. խե, էջ 85–86:

43 Նույն տեղում, խե, էջ 85:

44 Հ ո վ հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. էջ 140:

45 Հ ր. Բ ա ր թ ի կ յ ա ն. Առաջին երեք Բագրատունի թագավորների այսպես կոչված «բյուզանգական» թագի մասին.– «Պատմա-բանասիրական հանդես», 2001, N 3, էջ 149–154:

տության, Ֆրանսիայի և Գերմանիայի հետ[46]: Հասկանալի է, կայսրը պետք է ձգտեր դաշնակից դարձնել նաև Արևելքի քրիստոնյաներին, առաջին հերթին, իհարկե, հայոց թագակալին: Ըստ երևույթին, այդ հետնախորքի վրա էր, որ կայսրությունում ստեղծվեց Վասիլ I-ի Արշակունի ծագման մասին վարկածը, որի նպատակն էր, հավանարար վերակենդանացնել հայոց Արշակունի թագավորների օրոք եղած հայ-հռոմեական դաշինքի գաղափարը: Սակայն դա ղուրկ էր իրական հիմքից[47]:

Աշոտ Բագրատունին չփորձեց թագադրվելու համար դիմել Վասիլ I-ին և գերադասեց թագ ստանալ խալիֆայից, քանի որ Հայաստանը, թեև անվանապես, նրա գերիշխանության տակ էր: Առաջնահերթ խնդիր էր քաղաքականապես նրանից ձերբազերծվել և օրինական հիմքի վրա վերականգնել Հայոց թագավորությունը: Մինչդեռ իր հզորության գագաթնակետին դանվող և խալիֆայության դեմ հաջող պատերազմներ մղող Բյուզանդիայի կայսրից (և այն էլ՝ ծագումով հայ) թագ ստանալը թշնամացնելու էր խալիֆայի, նաև նրանից կախյալ հարևան ամիրայությունների հետ: Բացի այդ, կայսրից թագ ստանալով, Աշոտ Բագրատունին կախման մեջ էր ընկնելու նրանից: Աշոտը խալիֆայության հանգեպ խիստ զգուշավոր եղավ: Նա նույնիսկ Դվինը չդարձրեց մայրաքաղաք, որպեսզի չշեշտի Հայաստանի անջատվելը խալիֆայությունից, որը նախկինի պես այդ քաղաքը համարում էր իրեն ենթակա ոստիկանության կենտրոններից մեկը: Քաղաքական այդ հետնախորքի վրա հայ-բյուզանդական մերձեցումն ունեցավ ձևական նշանակություն: Աշոտ I-ը չմասնակցեց խալիֆայության դեմ Վասիլ I-ի մղած պատերազմներին: Հայաստանը մնաց չեզոք դիրքում, ինչը հույժ բարենպաստ եղավ նրա քաղաքական վերելքի ու տնտեսական բարգավաճման համար:

Հարկ է նկատի առնել նաև այն փաստը, որ Բյուզանդիայի կայսրից Աշոտ Բագրատունու թագ ստանալն էականորեն շոշափում էր նաև Հայոց եկեղեցու շահերը: Բյուզանդիայում միշտ հարկման էր ենթարկվում հոգևոր դասը, մինչդեռ Հայոց եկեղեցին ապահարկ էր: Հայաստանում բյուզանդական ազդեցության պարագայում կարող էր հարցականի տակ դրվել նաև Հայ եկեղեցու հարկային առանձնաշնորհյալ կացությունը: Վճռորոշ նշանակություն ուներ այն փաստը, որ Բյուզանդիայի կայսրից Հայոց թագավորի կախվածության դեպքում Հայաստանում կարող էր ուժեղանալ Քաղկեդոնական եկեղեցու ազդեցությունը, որից մեծապես խորշում էր դավանական ինքնորոշման ուղին բռնած Հայոց եկեղեցին:

Բյուզանդիայում Բագրատունի և Արծրունի թագավորներին արքա չէին կոչում, այլ իշխանաց իշխան[48], հավանորեն, նկատի առնելով նաև ոչ քրիստոնյա իշխողներից նրանց թագ ստանալու հանգամանքը: Իհարկե, կային բացառություններ: Այսպես, Պրոկոպիոս Կեսարացին չի գլացել հա-

---

[46] Տես А. Васильев. Византия и арабы. Политические отношения Византии и арабов за время Македонской династии. СПб., 1902, с. 8-11.

[47] N. Adontz. L'Age et l'origine de l'empereur Basile I (867-886).– "Etudes Armeno-Byzantines". Lisbonne, 1965, p. 105–106.

[48] Կոստանդին Ծիրանածին, էջ 7, 10–11, 151:

յոց Արշակ II թագավորին հիշել իբրև «արքայական արյուն ունեցող»[49]: Բյուզանդական մեկ այլ մատենագիր՝ Կեկավմենոսը Վասպուրականի երբեմնի դահակալին՝ Սենեքերիմ Արծրունուն անվանում է «թագավոր և հին թագավորների զարմից»[50]: Բայց դրանք բնորոշ չէին կայսրության պետական ոլորաններում:

Աշոտ Բագրատունին Հայ առաքելական եկեղեցու որդեդրած դավանական ուղեգծի ջերմեռանդ հետևորդն ու պաշտպանն էր, ինչը հավաստվեց նաև Փոտ պատրիարքին նրա հրամանով գրված պատասխան թղթում: Այդուհանդերձ նա շրջահայաց կերպով, ելնելով քաղաքական իրավիճակից, չէր խրախուսում օտարափառ եկեղեցիների հետ հայ հոգևորականության ունեցած դավանական ներհակությունները: Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը. Սևանի վանահայր Մաշտոցը (հետագայում՝ կաթողիկոս), որ հռչակված էր իր բարեպաշտությամբ, ինքնագլխորեն, առանց Գևորգ կաթողիկոսի գիտության, հաղորդակցության մեջ մտավ քաղկեդոնականների հետ[51]: Սակայն դա բնավ չխաթարեց Աշոտ իշխանաց իշխանի և Մաշտոցի միջև ձևավորված մերձակցությունը: Ավելին, Աշոտն անձամբ այցելեց Սևանա վանք՝ Մաշտոցին ընծայաբերելով «զփրկական նշանն աստուածընկալ խաչին. և տայ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն զեօղս՝ զՎարսերն, զՑամաքաբերդ, զԳոմաձորն, զԲերգքն, զՈւռեաց տափ և զորսն կռակծին և այգիս ի Գառնի և յԵրևան և յայլ տեղիս...»[52]: Դա կատարվեց կաթողիկոսի ու Մաշտոցի միջև հարաբերությունների ծայր աստիճան սրման պայմաններում, երբ Գևորգ հայրապետը նույնիսկ սպառնաց բանադրել Մաշտոցին, քաղկեդոնականների հետ հարաբերակցվելու պատճառով: Հետագայում Աբաս սպարապետին ուղարկած նամակում Մաշտոցը գրում էր, որ իր հանդեպ կաթողիկոսի բանադրանքը «յաւէտ յիրաւի և արժանի էր. և զի վրիպեցայ և ըստ արտուղի անկեալ՝ ինքնահրաման բարձի զխտրոց սուրբ հարցն, որ ի մէջ մեր և ի Քաղկեդոնականացն, վասն որոյ աղօթահայց ապաշխարութեամբ և առաջիանկմամբ պատառեցի նովին սուրբ ձեռօք զձեռնագրեալսն զինէն կարծեօք»[53]:

Այնուամենայնիվ, Հայոց եկեղեցին Վրաց եկեղեցու հանդեպ ցուցաբերեց դավանական հանդուրժամտություն, առաջնորդվելով Աշոտ Բագրատունու վարած հեռամետ ու շրջահայաց քաղաքականությամբ: Աշոտ Բագրատունու օրոք Հայաստանը թևակոխեց բարգավաճման շրջափուլը[54], ամրապնդվեցին նաև եկեղեցու հիմքերը: Աշոտը հավասարակշռված քաղաքականություն էր վարում նաև հայ նախարարների հանդեպ: Թովմա Արծրունին գրում է, որ հարաբերությունները սրվել էին Դերենիկ Արծրունու և նրա աներոջ՝ Աշոտ իշխանաց իշխանի միջև, որի պատճառով վերջինս իբր թե «դավ էր նյութել» իր փեսայի դեմ, ինչը հանդեցրեց Հեր քա-

---

[49] Պ ր ո կ ո պ ի ո ս Կ ե ս ա ր ա ց ի, թարգմ. առաջաբանը և ծանոթագրությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 10-12:

[50] Cecaumeni Strategicon et incerti scriptoris de officiis regiis libelleus. Petropoli, 1896, p. 96.

[51] Հ ո վ հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 150:

[52] Ս տ. Օ ր բ է լ ե ա ն. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, Լէ, էջ 174:

[53] Հ ո վ հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 150:

[54] H. D a g h b a s c h e a n. Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni. Berlin, 1893, s. 41, 78–79.

ղաքի ամիրայի կողմից Դերենիկի սպանությանը՝՝: Սակայն պատմագրի շարադրանքից երևում է, որ Աշոտ Բագրատունին չի մասնակցել Դերենիկի սպանությանը[56]: Իհարկե, Դերենիկ Արծրունու կենտրոնախույս ուղեգիծը չէր կարող չանհանգստացնել Աշոտ իշխանաց իշխանին, մանավանգ որ Դերենիկն, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, «ոչ անսայր բանի խրատու աներոյ իւրոյ որպէս յերէկն և յեռանդն...»՝՝: Սակայն պատմագիրը ընավ չի նշում Դերենիկի գեմ աներոջ լարած դավի մասին: Նա միայն շեշտում է Դերենիկի կողմից Հերի ու Զարևանդի ամիրաներին հնազանդեցնելու պատճառով վերջիններիս կազմակերպած դավադրությամբ Դերենիկին սպանելու փաստը[58]:

Աշոտ I թագավորը ցկյանս պահպանեց բարեհաճ վերաբերմունքը Հայոց եկեղեցու, անձամբ Գեորգ կաթողիկոսի հետ: Անգամ մահվան մահճում նա, ինչպես վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, իր մոտ հրավիրեց Գեորգ Գառնեցուն և «ղփրկութենագործ զմարմին և զարիւն Տեառն թոչակ յետին առ ի նմանէ իւր ընկալեալ, ոչ սակաւ ինչ քան թէ զբազումս բաշխէր գանձն ոսկւոյ և արծաթոյ ի տնանկս և յաղքատս, այլ և ի ձեռս հայրապետին հաւատայր գլիապատար գանձարանացն մթերս՝ և զերամակս ձիոց և զգասակս անգէոց և զհօտս ոչխարաց, ամենևին բնաւին բաշխել յեկեղեցիս ուղղափառաց»: Հոգևորականները կաթողիկոսի առաջնորդությամբ Աշոտ թագավորի մահվան թափորին ուղեկցեցին մինչև դամբանատեղի՝ «ի թագաւորանիստ աւանն Բագարան... զխաչակրօն սաղմոսերգութիւնս և զձայնս օրհնութեանցն նուագէին»,– հաղորդում է Դրասխանակերտցին[59]:

Գեորգ Գառնեցին թաղադրեց նաև Աշոտ I-ի որդուն՝ Սմբատ I-ին (890–913): Կաթողիկոսը թեև պահպանեց իր հոգևոր-ծիսական գերակայությունը, սակայն իշխանների վրա նրա ազդեցությունը քաղաքական տեսակետից թեական էր: Հատկանշական է հետևյալ փաստը: Աբաս սպարապետը՝ Սմբատի հորեղբայրը, Աշոտ I-ի մահից հետո ինքն էր կամենում բազմել նրա գահին՝ «յինքն զթագաւորութիւնն հնարէր նուաճել»,– վկայում է պատմագիրը: Երբ վրաց Ատրներսեհ իշխանը (ծագումով Բագրատունի), Սմբատ I-ին սփոփելուց (հոր մահվան առնչությամբ) հետո մեկնեց նաև Աբասի մոտ՝ նույն նպատակով, վերջինս նրան նետեց Կարսի բերդ, կասկածելով «ի քսութենէ ոմանց», թե Ատրներսեհը Սմբատի մոտ «վատ բան է խորհել» իր մասին: Սա առիթ դարձավ, որպեսզի Սմբատ I-ն ու Աբասն ընդհարվեն, որի հետևանքով «ոչ սակաւ խուժան աւերանաց զաշխարաւն հեղոյր»[60],– ցավով գրում է պատմագիրը: Վտանգավոր ընդհարումներին վերջ տալու առաքելությամբ կաթողիկոսը մեկնեց Աբասի մոտ, խնդրելով հաշտվել գահի օրինական հաջորդի՝ Սմբատ I-ի հետ և ազատ արձակել վրաց իշխանին: Թեև Աբասը խոստացավ կատարել հայոց

---

55 *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 352:*
56 I. M a r k w a r t. Նշվ. աշխ., էջ 314:
57 *Հ ո վ հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 140–141:*
58 *Նույն տեղում, էջ 140–141:*
59 *Նույն տեղում, էջ 142–143:*
60 *Նույն տեղում, էջ 144–145:*

հայրապետի խնդրանքը, նույնիսկ «յետկար երդմանն կնքեալ՝ տայր ցհայրապետն մեծ», սակայն դրժեց իր խոստումը, «քամահեալ ևս զմիջնորդութիւն կաթողիկոսին մեծի»: Գեորգ հայրապետը վերադարձավ Երազգավորս և այդ մասին իրազեկեց Սմբատ թագավորին: Աբասը հաշտվեց եղբոր հետ միայն այն ժամանակ, երբ վերջինս պաշարեց նրա նստավայր Կարսի բերդը:

Այս դեպքերի ժամանակ էր, որ խալիֆան թագ ուղարկեց Սմբատին: Հատկանշական է, որ վերջինս թագադրվեց ոչ թե Դվինում, այլ Երազգավորս գյուղաքաղաքի Ս. Փրկիչ եկեղեցում, որտեղ, ինչպես հավաստում է Հովհ. Դրասխանակերտցին, Գեորգ կաթողիկոսն «աւարտեալ ի վերայ զնուիրական ազօթսն և ածեալ ի գիծս և ի գիրս և ի նկարս տեսականս զոսկեճամուկ զգեցութիւնսն, և եդեալ ի գլուխ զթագ թագաւորութեան նորա»[61]: Այդպիսով Գեորգ կաթողիկոսը ոչ միայն օրհնել, այլև թագադրել է նաև Սմբատ արքային, նրա ուսերին գցելով թագավորական ծիրանին: Վարդան Արևելցին և Ստեփաննոս Օրբելյանը նշում են, որ կաթողիկոսը լոկ օծել է Սմբատ Ի-ի թագը[62]: Անշուշտ, ավելի ստույգ է ժամանակով մոտիկ Հովհ. Դրասխանակերտցու վկայությունը:

Այնուամենայնիվ Աբասը չհաշտվեց Գեորգ կաթողիկոսի հետ, նրան համարելով Սմբատի գահակալության և այդպիսով իրեն թագավորի գահաթոռից զրկելու պատճառ: Աբասն այս անգամ ևս անսաց իր վատգի կուսակիցներին, որոնք «գիւի չարի մատնեալք զերասանակ հոգւոյ իւրեանց», չարախոսում էին Գեորգ Գառնեցու մասին, հույս ակնկալելով, որ այդ կերպ կարող են իրականացնել «զանկումն սրբոյ կաթողիկոսին»[63]: Աբասն, անշուշտ, հույս ուներ, որ այդ կերպ ի դերև էր հանվելու թագի նկատմամբ Սմբատի իրավունքը, քանի որ այն հաստատվել էր կաթողիկոսի կողմից: Աբասը հույս ուներ Գեորգ կաթողիկոսին գահընկեց անել Սևանի վանահայր Մաշտոցի միջոցով, որը հռչակված էր բարեպաշտ վարքով և հոգևորականների վրա ունեցած մեծ ազդեցությամբ: Անշուշտ, Աբասը նկատի առավ նաև այն հանգամանքը, որ մի պահ սրվել էին հարաբերությունները Գեորգ Գառնեցու և Մաշտոցի միջև, վերջինիս և քաղկեդոնականների առնչակցության պատճառով: Աբասը դիմեց Մաշտոցին հատուկ նամակով, որը պարունակում էր «ամբաստանութիւն յոյժ բծամիտ իմն զկաթողիկոսէն»: Նա Մաշտոցին խոստանում էր բազմեցնել կաթողիկոսի գահին, «միայն թէ հաւանեսցի ի ժողովս չարացն դալ հասանել և միաբանել» իրեն հետ: Սակայն այդ լուսամիտ այրը բնավ չհրապուրվեց Աբասի խոստումներով և «զայրացավ յոգի իւր»: Պատասխան թղթով Մաշտոցը կտրուկ մերժեց նրա առաջարկը: «Քաւ լիցի,– ասվում էր այդ երկարաբան նամակում,– ձեռս ամբառնալ յօծեալն Աստուծոյ և քրէական մեղօք վտարանդի լինել անթողլովն և անբժշկելովն»[64]: Ապա քրիստոնեական բարոյականության դիրքերից Մաշտոցը կոչ էր անում Աբասին հրաժարվել անիրավ մտահղացումից, «զի առ հանգերձեալսն դատաստանք

---

[61] Նույն տեղում, էջ 147:
[62] Վարդան, խե, էջ 86, Ստ. Օրբելեան, ԼԷ, էջ 176:
[63] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 147:
[64] Նույն տեղում, էջ 151:

ձեր քաղցը եղիցին առաջի տիեզերական ատենին և փառս և պատիւ ընկալջիք յԱստուծոյ ընդ երկայն աւուրս»: Այս անգամ աստվածավախ սպարապետը երկյուղեց և անսաց նրա հորդորներին: Աբասն, ինչպես հավաստում է Հովհաննես Դրասխանակերտցին՝ «սարսափմամբ սրտի զարհուրեալ երկնչելով յերագահաս դատաստանացն Աստուծոյ, բազմահոգաչ պաղատանօք և արտասուօք անկեալ առ ոտս Հայրապետին՝ հայցէր թողութիւն», որին նա ի վերջո արժանացավ անհիշաչար հայրապետի կողմից[65]: Այս անգամ եկեղեցու առաջնորդի հոգևոր ներգործությամբ հնարավոր դարձավ վերջ տալ վտանգավոր հետևանքներով հղի ընդհարումներին:

Գեորգ կաթողիկոսը մասնակցում էր նաև միջպետական քաղաքական կնճիռների վերացման գործընթացներին: Ուշադրավ է, որ երբ Ատրպատականի Ափշին ոստիկանը 894 թ. ստվարաթիվ զորքով ներխուժեց Հայաստան, հասնելով Նախճավան քաղաք, կաթողիկոսը, մոտալուտ պատերազմը կանխելու մտահոգությամբ «գնայր ընդառաջ ոստիկանին, զի թերևս ջանահնարն լինել նորա առ Ափշնին՝ զսիրտ քարեղէն նորա կակղել բաւեսցէ, և խնամարկել բանաւոր հօտի Տեառն»[66]: Եվ դա այն պարագայում, երբ Ափշինն իր մոտ հրավիրեց նաև Սմբատ I-ին, որը, սակայն, կռահելով նրա նենգ մտագրությունը, հրաժարվեց մեկնել նրա մոտ: Մինչդեռ կաթողիկոսն անտեսեց զգուշացնող ձայները և ստիպված անձամբ ժամանեց ոստիկանի մոտ, որպեսզի վերջ տա Հայաստանի և Սմբատ թագավորի նկատմամբ ոստիկանի չարադետ նկրտումներին: Բայց վերջինս ոչ միայն չանսաց Հայաստանի հոգևոր առաջնորդին, այլև, ինչպես վկայում է պատմագիրը՝ «հրամայէ ունել դնել զնա ի չղթայս և ի ձեռնակապս երկաթիս, և ինքն խաղայ գնա ի վերայ արքային Սմբատայ»[67]:

Թեև նույն ժամանակ Դողս գյուղի մերձակայքում հայոց բանակը ջախջախեց Ափշինի զորքը, սակայն Սմբատ թագավորն առաջնորդվելով երկրի խաղաղությունն ապահովելու, ինչպես նաև կաթողիկոսին բանտի կապանքներից ազատելու ցանկությամբ, մուծեց խալիֆայության պահանջած հարկագումարը: Բայց դրանից հետո, ավելի քան երկու ամիս, ընչաքաղց ոստիկանն ազատ չարձակեց Գեորգ հայրապետին, կամենալով, անշուշտ, նրանից կորզել իր բաժին դանձը: Նա կաթողիկոսից, իբրև փրկավճար, պահանջեց «գանձս ոսկւոյ և արծաթոյ», ապա նրան տարավ Փայտակարան քաղաք: Հայոց հովվապետն ազատ արձակվեց միայն այն ժամանակ, երբ հայ իշխանները Համամ Արևելցի նախարարի միջոցով մեծադումար դանձեր ուղարկեցին Ափշինին[68]:

Վերոշարադրյալից կարելի է հետևեցնել, որ Բագրատունյաց թագավորության հիմնումից հետո Հայ առաքելական եկեղեցու առաջնորդները պահպանում էին իրենց ազդեցիկ դերը երկրի հոգևոր ու պետական-քաղաքական ոլորտներում: Անհրաժեշտ դեպքերում նրանք միջամտում էին Հայաստանի ներքաղաքական, երբեմն նաև արտաքին քա-

---

[65] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 157–158:
[66] Նույն տեղում, էջ 168:
[67] Նույն տեղում:
[68] Նույն տեղում, էջ 169–170:

ղաքական գործընթացներին: Կաթողիկոսները սատարում էին երկրի գործուն ուժերի քաղաքական համախմբման ուղղությամբ Բագրատունի թագավորի ներդրած ջանքերին: Հայոց թագավորի իշխանությունը սրբազանագործող կաթողիկոսները ջանում էին երկրի լայն խավերում սնուցանել այդ իշխանության օրինականության գաղափարը: Նրանք նաև հետամուտ էին Հայաստանի միասնական իրավակեցության ապահովմանը: Առաջնորդվելով իրենց հոտի համար տանելի գոյավիճակ ստեղծելու կենսահույզ խնդիրներով, հայոց կաթողիկոսները չէին խուսափում մահմեդական տիրակալների մոտ վտանգավոր դիվանագիտական առաքելությունների դիմելուց: IX դ. երկրորդ կեսին Հայոց եկեղեցու և պետության համադաշն գործունեությունը հույժ նպաստավոր եղավ Հայոց թագավորության ամրակայացման, երկրի քաղաքական միասնության ու խաղաղակեցության, բարգավաճման և հոգևոր-մշակութային առաջընթացի համար: Այն նաև նպաստեց Հայ առաքելական եկեղեցու հինավուրց հիմքերի ամրապնդմանը:

ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ ОТНОШЕНИЙ ГОСУДАРСТВА И ЦЕРКВИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ IX в.

ВРЕЖ ВАРДАНЯН

Резюме

Армянская Апостольская церковь выступала защитницей и носительницей идей государственности и права. Багратидские армянские цари нуждались в таком влиятельном союзнике, как церковь. Первые Багратидские цари укрепляли зкономическую мощь церкви, помогали решать духовные дела, входившие в компетенцию католикоса. В свою очередь католикосы иногда вмешивались в межкняжеские раздоры, стремясь сгладить противоречия. Багратидские цари направляли деятельность церковных соборов. Исходя из политических соображений, они не возбудили богословские, конфессиональные распри между Армянской и халкидонскими церквами. Причем царь Ашот I отверг предложения византийского патриарха Фотия о принятии армянами халкидонского вероисповедания. Благодаря поддержке светской власти, Армянская церковь сохраняла свою целостность, привилегированный статут, иерархичность.